**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ սեպտեմբերի 2022 թվականի №____-Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի №371Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի օգոստոսի 15-ի գրությունը, այդ թվում՝ կից ներկայացված ջրային կոմիտեի և «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 20-ին կնքված №02 հիդրոկառույցին միացման պայմանագիրը, որի անբաժանելի մաս հանդիսացող №1 հավելվածում հիդրոէլեկտրակայանների բնութագրիչ տվյալները տարբերվում են «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0259 լիցենզիայով ամրագրված հաշվարկային և դրվածքային հզորությունից՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի սեպտեմբերի 14-ի «ԼԵՌ-ԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության)

արտադրության լիցենզիա տրամադրելու և հիդրոէլեկտրակայանի գույքը գրավ դնելուն համաձայնություն տալու մասին» №371Ա որոշմամբ «ԼԵՌ ԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԼԵՌ ԷՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0162, 0226, 0259, 0278 լիցենզիաները վերաձևակերպելու մասին» №718Ա որոշմամբ «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0259 լիցենզիայի գործողության ժամկետը, որոշման՝

1) 1-ին կետում «Փայահան համայնքում՝ Գյարդ-Աջիբաջ-Գեղի ջրամաքրման կայանի ջրատարի վրա» բառերը փոխարինելով «Քաջարան համայնքի վարչական տարածքում՝ (գյուղ Գեղի)՝ Գյարդ-Աջիբաջ խմելու ջրի ճնշումային ջրագծի վրա» բառերով, իսկ «15 տարի» բառերը՝ «մինչև 2037 թվականի սեպտեմբերի 14-ը» բառերով,
2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում՝ «մինչև 2022 թվականի սեպտեմբերի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2037 թվականի սեպտեմբերի 14-ը» բառերով, իսկ 5-րդ կետում «Փայահան համայնքի վարչական տարածքն է՝ Գյարդ-Աջիբաջ-Գեղի ջրամաքրման կայանի ջրատարի վրա» բառերը՝ «Քաջարան համայնքի վարչական տարածքն է (գյուղ Գեղի)՝ Գյարդ-Աջիբաջ խմելու ջրի ճնշումային ջրագծի վրա» բառերով:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել հիդրոկառույցին միացման (հիդրոկառույցը օգտագործելու) վերաբերյալ պայմանագրի՝ «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանի ճշգրտված բնութագրիչներով տարբերակը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1.2 մասով սահմանված 15 տարվա ժամկետը Ընկերության համար ավարտվում է 2022 թվականի սեպտեմբերի 14-ին.
   2) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար

հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 14-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2022թ.